

Կ-621-03.10.2014-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**ՕՐԵՆՔԸ****ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՐԿԵՐԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ցանկում (այսուհետ՝ Ցանկ) ներառված՝ մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող հողատարածքներ ունեցող սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու հետ կապված հարաբերությունները:

Հոդված 2. Սույն օրենքի իմաստով, սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեություն է համարվում ցանկում ներառված համայնքների վարչական սահմաններում՝

1) առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում վաճառատեղերի միջոցով բնակչությանը մանրածախ վաճառքի (առք ու վաճառքի) իրականացման գործունեությունը,

2) տնտեսական գործունեության շրջանակներում արտադրության կազմակերպումը՝ անկախ այն հանգամանքից, թե որտեղ է իրացվում պատրաստի արտադրանքը՝ ցանկում ներառված սահմանամերձ գյուղական համայնքների վարչական սահմաններում, թե դրանցից դուրս,

3) «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված գործունեությունը, բացառությամբ թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրման գործունեության:

Հոդված 3. Ցանկում ներառված սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու արտոնությունների կիրառությունը նշանակում է, որ՝

1) այդ համայնքների վարչական սահմաններում գտնվող առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում վաճառատեղերի միջոցով բնակչությանը մանրածախ վաճառքի (առք ու վաճառքի) իրականացման գործունեությունից եկամուտներն ազատվում են շրջանառության հարկից, իսկ այդ գործունեությունն իրականացնող և շրջանառության հարկ վճարող համարվող անհատ ձեռնարկատերերն ազատվում են ձեռնարկատիրական գործունեության համար օրենքով նախատեսված եկամտային հարկից,

2) տնտեսական գործունեության շրջանակներում արտադրության (բացառությամբ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների արտադրության) կազմակերպման արդյունքում ստացված արտադրանքի՝

ա. իրացումից եկամուտներն ազատվում են շրջանառության հարկից,

բ. օտարման գործարքներն ազատվում են ավելացված արժեքի հարկից,

գ. իրացումից ստացման ենթակա եկամուտներն ազատվում են շահութահարկից կամ եկամտային հարկից,

3) «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված գործունեությունը, բացառությամբ թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրման գործունեության, ազատվում է արտոնագրային վճարից, իսկ այդ գործունեությունն իրականացնող անհատ ձեռնարկատերերն ազատվում են ձեռնարկատիրական գործունեության համար օրենքով նախատեսված եկամտային հարկից,

4) կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերն ազատվում են ցանկում ներառված սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեության մասով Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված դեպքերում, որպես հարկային գործակալ, հարկը հաշվարկելու, պահելու և պետական բյուջե փոխանցելու պարտավորությունից, բացառությամբ հարկային գործակալի կողմից վճարվող՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներից և դրանց հավասարեցված եկամուտներից օրենքով սահմանված ընդհանուր կարգով հաշվարկվող եկամտային հարկի և սոցիալական վճարի:

Հոդված 4. Կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը ցանկում ներառված սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեության մասով՝

1) վարում են եկամուտների և ծախսերի առանձնացված հաշվառում (կազմակերպությունների համար՝ առանձնացված հաշվապահական հաշվառում), որի հիման վրա հաշվետու ժամանակաշրջանի համար օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված համախառն եկամուտը, ինչպես նաև այդ գործունեությունների հետ կապված ծախսերը հարկման նպատակով նվազեցվում են համապատասխանաբար նույն ժամանակաշրջանում ցանկում ներառված սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեության մասով ստացվող համախառն եկամտի և դրա հետ կապված ծախսերի գումարի չափով: Եթե ցանկում ներառված սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեության հետ կապված ծախսերի որոշ տեսակների մասով հնարավոր չէ վարել առանձնացված հաշվառում, ապա այդ ծախսերը հաշվետու ժամանակաշրջանի համար օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված ծախսերից հարկման նպատակով նվազեցվում են հաշվետու ժամանակաշրջանի համար օրենսդրությամբ

սահմանված կարգով հաշվարկված համախառն եկամտի մեջ ցանկում ներառված սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեության մասով հաշվարկված համախառն եկամտի տեսակարար կշռին համապատասխան: Առանձնացված հաշվառում վարելու արդյունքներն արտացոլվում են հարկային մարմին ներկայացվող հաշվարկներում և հայտարարագրերում,

2) իրենց կողմից առաքվող, տրամադրվող, վաճառվող ապրանքների (մատուցվող ծառայությունների) գծով գնորդներին (ծառայություններից օգտվողներին) դուրս են գրում հաշվարկային փաստաթղթեր՝ օրենսդրությամբ սահմանված կարգով,

3) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով իրականացնում են հաշվապահական հաշվառում (հարկային օրենսդրությամբ կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով նախատեսված դեպքերում՝ նաև այլ հաշվառում և (կամ) գրանցումներ) և օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հարկային մարմին են ներկայացնում հաշվարկներ, հայտարարագրեր, հարկային օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթեր և տեղեկություններ:

Հոդված 5. Եթե ցանկում ներառված սահմանամերձ գյուղական համայնքներում առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողի մոտ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հավելվածով սահմանված կարգով իրականացված ստուգման արդյունքում արձանագրվում է ապրանքներ ձեռք բերելու գործարքների փաստաթղթավորման պահանջի խախտում (այդ թվում՝ ցանկում ներառված սահմանամերձ գյուղական համայնքների վարչական սահմաններից դուրս իրականացվող առևտրական (առք ու վաճառքի) գործունեության մասով), ապա՝

1) տարվա ընթացքում առաջին անգամ ապրանքների ձեռք բերման գործարքների փաստաթղթավորման պահանջի խախտում արձանագրվելու դեպքում կիրառվում է նախազգուշացում,

2) տարվա ընթացքում երկրորդ անգամ ապրանքների ձեռք բերման գործարքների փաստաթղթավորման պահանջի խախտում արձանագրվելու դեպքում ստուգման ակտը կազմելու օրվան հաջորդող օրվանից (բացառությամբ սույն հոդվածի երրորդ պարբերությամբ սահմանված դեպքերի) հարկ վճարողը դադարում է օգտվել շրջանառության հարկից ազատման արտոնությունից՝ տվյալ տարվա մնացած ժամանակահատվածում և դրան հաջորդող մեկ տարում:

Սույն հոդվածի առաջին պարբերությամբ նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառությունից հետո արձանագրվող՝ ապրանքներ ձեռք բերելու գործարքների փաստաթղթավորման պահանջի խախտումների դեպքում կիրառվում են հարկային օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության միջոցները:

Եթե «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հավելվածով սահմանված կարգով իրականացված ստուգման արդյունքում ապրանքներ ձեռք բերելու գործարքների փաստաթղթավորման պահանջը խախտված լինելու մասին ստուգման ակտը կամ ստուգում իրականացնող անձանց գործողությունները սահմանված կարգով բողոքարկվել են, ապա դիմում-գանգատը մերժվելու մասին որոշումը պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) հանձնելու օրվան հաջորդող օրվանից հարկ վճարողը դադարում է օգտվել շրջանառության հարկից ազատման արտոնությունից՝ տվյալ տարվա մնացած ժամանակահատվածում և դրան հաջորդող մեկ տարում: Դիմում-գանգատը բավարարվելու կամ դիմում-գանգատը մերժելու վերաբերյալ որոշումը դատական կարգով չեղյալ ճանաչվելու դեպքերում առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողը շարունակում է օգտվել շրջանառության հարկից ազատման արտոնությունից՝ այն պահից, որ պահից, ստուգման ակտի համաձայն, դադարել էր օգտվել շրջանառության հարկից ազատման արտոնությունից:

Եթե ցանկում ներառված սահմանամերձ գյուղական համայնքներում գործունեություն իրականացնող ավելացված արժեքի հարկ վճարողի մոտ արձանագրվում է «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի բաղկացուցիչ մասը կազմող թիվ 4 հավելվածով սահմանված կարգի խախտում (անփաստաթուղթ արտադրանքի, ապրանքների տեղափոխման կամ առաքման կամ առաքվող կամ տեղափոխվող ապրանքն ուղեկցող փաստաթուղթը սահմանված կարգով չգրանցելու դեպք) կամ եթե հավելվածում նշված սահմանամերձ գյուղական համայնքներում գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողի մոտ արձանագրվում է անփաստաթուղթ արտադրանքի, ապրանքների տեղափոխման կամ առաքման դեպք, ապա՝

1) տարվա ընթացքում առաջին խախտումն արձանագրվելու դեպքում կիրառվում է «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցը,

2) տարվա ընթացքում երկրորդ խախտումն արձանագրվելու դեպքում կիրառվում է «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցը և համապատասխան վարչական ակտը կազմելու օրվան հաջորդող օրվանից հարկ վճարողը դադարում է օգտվել շրջանառության հարկից կամ ավելացված արժեքի հարկից և շահութահարկից (եկամտային հարկից) ազատման արտոնությունից՝ տվյալ տարվա մնացած ժամանակահատվածում և դրան հաջորդող մեկ տարում:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների, դրանց ընդունման կամ չընդունման վերաբերյալ

h/h	Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Կատարված փոփոխությունները
1.	ՀՀ ԱԺ Խմբակցություններ, ՀՀ ԱԺ պատգամավորներ Միքայել Մելքումյան, Նաիրա Զոհրաբյան	Առաջարկվում է նախագծերի փաթեթից առանձնացնել օրենքների այն նախագծերը կամ նախագծերում ներառված այն դրույթները, որոնք անմիջականորեն չեն առնչվում ՀՀ սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելուն, մասնավորապես՝ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Ճանապարհային վճարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը, «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի այն դրույթները, որոնք վերաբերում են սահմանի վրայից ԱԱՀ հետաձգման շեմը հանելուն կամ հաշվանցման մեխանիզմներին և այլն:	Ընդունվել է: Նախագծերի փաթեթից առանձնացվել է «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:
2.	ՀՀ ԱԺ խմբակցություններ ՀՀ ԱԺ պատգամավորներ Կորյուն Նահապետյան	Առաջարկվում է «սահմանամերձ համայնքներ» հասկացությունը և դրա չափանիշները սահմանել օրենքով: Առաջարկվում է՝ 1) նախագծի վերնագրում «սահմանամերձ գյուղական համայնքներ» հասկացությունը բացել,	Ընդունվել է: Մասնավորապես, նախագծով սահմանվել է, որ օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ կառավարության կողմից հաստատված ցանկում ներառված՝ մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող հողատարածքներ ունեցող սահմանամերձ գյուղական համայնքների վրա:

	Արայիկ Հովհաննիսյան Հեղինե Բիշարյան, Հովհաննես Մարգարյան	2) նախագծում հստակեցնել, որ օրենքի գործողությունը տարածվում է մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող հողատարածքներ ունեցող սահմանամերձ համայնքների վրա: Առաջարկվում է նախագծի վերնագրից հանել «գյուղական» բառը: Առաջարկվում է նախագծում «Սահմանամերձ գյուղական համայնքներում» բառերը փոխարինել «Սահմանապահ և մինչև 300 բնակիչ ունեցող համայնքներում» բառերով:	Այդ համայնքների ցանկը ներկայումս սահմանված է ՀՀ կառավարության 2013 թվականի մարտի 21-ի թիվ 271-Ն որոշմամբ, և այդ համայնքներն են. Արարատի մարզում՝ Երասխ, Գեղարքունիքի մարզում՝ Վահան, Վայոց Ձորի մարզում՝ Խաչիկ, Խնձորուտ, Սերս, Նոր Ագնաբերդ, Բարձրունի, Տավուշի մարզում՝ Ներքին Կարմիր աղբյուր, Ոսկեվան, Չորաթան, Կողբ, Վազաշեն, Բերքաբեր, Չինարի, Արծվաբերդ, Ծաղկավան, Մոսեսագեղ, Դովեղ, Պառավաքար, Բերդավան, Բարեկամավան, Կոթի, Բաղանիս, Սարիգյուղ, Այգեծոր, Կիրանց, Այգեպար, Սևքար, Այգեհովիտ, Ոսկեպար:
3.	ՀՀ ԱԺ պատգամավորներ Հերմինե Նաղդալյան Էդմոն Մարուքյան	Առաջարկվում է քննարկել օրենքով հարկային արտոնությունների կիրառության նվազագույն ժամկետ սահմանելու հարցը: Առաջարկվում է քննարկել օրենքով հարկային արտոնությունների կիրառության նվազագույն՝ 20 տարի ժամկետ սահմանելու հարցը:	Կարծում ենք, որ օրենքով արտոնությունների կիրառության նվազագույն ժամկետ սահմանելու մոտեցումը խնդրահարույց է: Մասնավորապես, առաջարկվում է սահմանել աննախադեպ հարկային արտոնություններ, փոխարենը, սակայն, հնարավոր չարաշահումները կամ վարչարարական ռիսկերը, որոնք կարող են առաջանալ, ամբողջությամբ տեսանելի չեն:
4.	ՀՀ ԱԺ խմբակցություններ ՀՀ ԱԺ պատգամավորներ	Առաջարկվում է քննարկել սահմանամերձ համայնքներում իրականացվող գործունեության մասով փաստաթղթավորման պահանջի վերացման կամ մեղմացման հարցը: Առաջարկվում է նախագծերի փաթեթը համալրել «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի համապատասխան լրացմամբ, որի համաձայն, ՀՀ	Հարկային արտոնությունների տրամադրումը պետք է զուգորդվի հարկ վճարողների հարկային կարգապահության աստիճանի բարձրացմամբ: Բացի այդ, սահմանամերձ համայնքներում իրականացվող գործունեության մասով փաստաթղթավորման պահանջի վերացումը կամ մեղմացումը

	Միքայել Մելքումյան, Նաիրա Զոհրաբյան Հեղինե Բիշարյան, Հովհաննես Մարգարյան	սահմանամերձ գյուղական համայնքներում առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների մոտ կրացառվի ապրանքների ձեռքբերման փաստաթղթերով հիմնավորվածության պարտադիր պահանջը: Առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել նախագծի 5-րդ հոդվածը (փաստաթղթավորման պահանջների խախտման դեպքերում պատասխանատվության միջոցների կիրառություն):	կնշանակի խաթարել գործարքների փաստաթղթավորման ողջ շղթան, քանի որ սահմանամերձ համայնքներում գործունեություն իրականացնող հարկ վճարողները գործարքներ են կատարելու նաև սահմանամերձ համայնքներից դուրս գտնվող տարածքներում գործունեություն իրականացնող հարկ վճարողների հետ: Միևնույն ժամանակ, առաջարկության ընդունման դեպքում դաշտ կստեղծվի, որպեսզի խոշոր տնտեսավարող սուբյեկտները իրենց ապրանքային քանակությունները առանց փաստաթղթավորման իրացնեն արտոնությունից օգտվող համայնքներում: Այս առումով, ներկայացված առաջարկության ընդունումը լուրջ հարված կհասցնի տնտեսությունում կատարվող գործարքների փաստաթղթավորման խնդրի լուծման ուղղությամբ հետևողականորեն իրականացվող աշխատանքներին:
5.	ՀՀ ԱԺ պատգամավոր Արծվիկ Մինասյան	Առաջարկվում է՝ 1) նախագծում հստակեցնել «արտադրության կազմակերպում հասկացությունը»: Մասնավորապես, առաջարկվում է հստակեցնել, որ խոսքը տնտեսական գործունեության շրջանակներում կազմակերպվող արտադրությունների մասին է, 2) նախագծով արտոնություններ նախատեսել նաև հաստատագրված վճարի օբյեկտ համարվող գործունեության տեսակների մասով:	Ընդունվել է: Նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածների 2-րդ կետերում կատարվել են համապատասխան հստակեցումներ: Ներկայումս հաստատագրված վճարի օբյեկտ են համարվում միայն ավտոտրանսպորտային գործունեությունը, վիճակախաղերի կազմակերպումը և ավտոտրանսպորտային

			միջոցների գազալցման գործունեությունը (այն դեպքում, եթե լիցքավորման կայանում տեղադրված չեն բաշխիչ աշտարակներ): Ավտոտրանսպորտային գործունեության մասով առաջարկությունն ընդունելի չէ, քանի որ այդ գործունեությունը բացառապես սահմանամերձ համայնքների տարածքում իրականացնելու նկատմամբ հսկողությունը գործնականում հնարավոր չէ (հենց այս նկատառումով, նախագծում արտոնագրային վճարից ազատմանը վերաբերող դրույթներում բացառություն է կատարված թեթև մարդատար մեքենաներով ուղևորափոխադրման գործունեության մասով): Միայն սահմանամերձ համայնքի տարածքում վիճակախաղի կազմակերպումը գործնականում իրատեսական չէ, իսկ եթե այդ գործունեությունը օրենքով չսահմանափակվի միայն սահմանամերձ համայնքի տարածքով, կստեղծվեն հարկումից խուսափելու հնարավորություններ և մոտեցումը չի համապատասխանի օրենքի ընդհանուր տրամաբանությանը: Ինչ վերաբերում է ավտոգազալցման գործունեությանը, ապա անհրաժեշտ է հաշվի առնել, որ օրենքի կարգավորման դաշտում գտնվող համայնքների տարածքում ավտոգազալցման գործունեություն չի իրականացվում: Բացի այդ, գործունեության այս տեսակը հիմնականում ԱԱՀ-ի դաշտում է,
--	--	--	--

			քանի որ եթե գազալցման կայանում տեղադրված են բաշխիչ աշտարակներ, ինչը ՀՀ կառավարության պահանջ է, ապա գործունեությունը տեղափոխվում է հարկման ընդհանուր համակարգ:
6.	ՀՀ կառավարություն	Առաջարկվում է նախագծի 3-րդ հոդվածի 3-րդ կետում «իրականացնող և անհատ ձեռնարկատերերն» բառերը փոխարինել «իրականացնող անհատ ձեռնարկատերերն» բառերով:	Նախագծի 3-րդ հոդվածի 3-րդ կետում կատարվել է համապատասխան փոփոխություն: